

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հաստատված է՝

Հայկական բժշկական ինստիտուտի

Ռեկտորի 27/08/2019թ.

թիվ 764/31 հրամանով

Ընդունված է՝

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 27.08. 2019 թ.

թիվ 51 նիստում

ռեկտոր՝ Գ.Հ.Մխչյան

(ստորագրություն)



ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Բովանդակություն

1. ներածություն

2. դասընթացներ

3. գիտելիքի ամփոփում

4. գիտելիքի գնահատում

5. կրեդիտային համակարգ

6. ուսխորհուրդ

7. ուսանողի իրավունքների պաշտպանություն

8. գիտահետազոտական աշխատանք

9. «լավագույն խումբ» և տարվա «լավագույն ուսանող»

10. ուսանողական նպաստներ

11. կուրատորներ

12. Ուսանողի PORTFOLIO

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԲԻ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԲԻ-ն հիմնադրվել է 1990 թվականին: Հանդիսանում է առաջին մասնավոր բժշկական բուհը հետխորհրդային տարածքում: Պետության կողմից հավատարմագրվել է 2001 թ-ին: Հիմնադրման օրվանից ՀԲԻ-ը ձգտել է ձևավորել սեփական դասախոսական կազմ՝ հանրապետությունում բազմաթիվ բժշկական ուղղվածության գիտահետազոտական հաստատություններից հրավիրվեցին աշխատելու հեղինակավոր և վաստակաշատ գիտնականներ: ՀԲԻ-ն համագործակցության պայմանագրեր կնքեց այդ գիտահետազոտական հաստատությունների հետ, որոնց բազայի վրա կազմավորվեցին ինստիտուտի ամբիոնները: Գիտահետազոտական հիմնարկների լավագույն աշխատակիցներից ընտրվեց մեր դասախոսական կազմը: Այդ շարքին էին պատկանում համաճարակաբանության ինստիտուտը, ուր հիմնվեցին վիրուսաբանության, իմունաբանության, մանրէաբանության և պարազիտաբանության ամբիոնները: Յոլյանի անվան արյունաբանության ինստիտուտը, որի բազայի վրա ձևավորվեց և մեր հանրապետությունում առաջին անգամ բուհական համակարգում դասավանդվեցին կլինիկական իմունոլոգիա, հեմատոլոգիա և տրանսֆուզիոլոգիա առարկաները: ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտը, ուր հիմնադրվեց և սկսվեց դասավանդվել մարդու նորմալ ֆիզիոլոգիա առարկան, ամբիոնը ղեկավարում էր փորձառու գիտնական ակադեմիկոս Հովհաննես Բակլավաջյանը: Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի բազայից ընտրվեցին բժշկական քիմիայի և ֆարմակոլոգիայի թիմը: ՀՀ ԳԱԱ մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտի հենքի վրա ձևավորվեց կենսաքիմիայի ամբիոնը, հիմնադիր և ղեկավար ակադեմիկոս Կոնստանտին Ղարազյոզյան: Այս ձևով իրապես հնարավոր դարձավ ապահովել գիտության և կրթության կապը: Ուշադրություն էր դարձվում ուսանողների հետազոտական մտածողության ձևավորմանը և նրանցից շատերը դասերի ավարտից հետո մնում էին լաբորատորիաներում օգնելու իրենց դասախոս ասիստենտներին հետազոտական աշխատանքներում և պատահական չէր, որ մեր առաջին իսկ ուսանողական գիտաժողովը շատ ներկայացուցչական եղավ:

1991-1992 ուսումնական տարուց Հայկական բժշկական ինստիտուտը տեղափոխվեց «Էրեբունի» բժշկական կենտրոն: Էրեբունի հիվանդանոցի բազայի վրա ծավալվեցին հիմնական կլինիկական առարկաների դասավանդումը: Առաջին անգամ ներքին հիվանդություններ առարկան սկսվեց դասավանդվել ոչ թե ֆակուլտետային և հոսպիտալային թերապիայի ծրագրով, այլ առանձնացված, իբրև ինքնուրույն ծրագրեր՝ պոլիմոնոլոգիա, կարդիոլոգիա, գաստրոէնտերոլոգիա, ռևմատոլոգիա, նեֆրոլոգիա և այլն: Կլինիկական ամբիոնների գործունեությունը համակարգում էր փորձառու և բանիմաց պրոֆեսոր Ռաֆայել Մամիկոնյանը: Պրոֆեսորադասախոսական կազմի մեջ ներգրավված էին ազգային ակադեմիայի ակադեմիկոսներ, թղթակից անդամներ, գիտության դոկտորներ և թեկնածուներ (բժշկական և կենսաբանական գիտությունների), դոցենտներ, պրոֆեսորներ:

Արդի պայմաններում կադրային ներուժին ներկայացվող պահանջները շարունակաում են մնալ բարձր:

Ներկայումս ինստիտուտում աշխատում են շուրջ 150 բարձրակարգ մասնագետներ՝ գիտությունների դոկտորներ, պրոֆեսորներ, գիտության թեկնածուներ, դոցենտներ: Գիտական հզոր այս ներուժը լուրջ դերակատարություն ունի Հայաստանում՝ բժշկագիտության զարգացման գործում: ՀԲԻ-ում գործում են 54 ամբիոններ: ՀԲԻ-ի ամբիոնները տեղակայված են իր սեփական մասնաշենքում և 27 կլինիկական բազաներում, որոնք հանդիսանում են հանրապետության առաջատար բժշկական կենտրոնները: «Էրեբունի» կլինիկական հիվանդանոցը հանդիսանում է ինստիտուտի գլխավոր ուսումնա-արտադրական բազան, որտեղ ուսանողները ստանում են արժեքավոր գիտելիքներ և պրակտիկ փորձ: ՀԲԻ-ում գործում են երկու ֆակուլտետներ՝ Բուժական և Ստոմատոլոգիական:

Տարեց տարի լսարանները, ուսումնական սենյակները, ֆանտոմային դասարանները, լաբորատորիաները զինվում են ժամանակակից սարքավորումներով և տեխնիկայով: Սկսած 2017 թվականից կառուցվում են մի շարք լաբորատոր դասարաններ, որոնք 2-րդ հարկի զգալի մասն են զբաղեցնում:

Ինստիտուտն ունի անատոմիական թանգարան, որտեղ ներկայացված են յուրահատուկ նմուշներ, որոնք երկու տասնյակ տարիների ընթացքում հավաքվել են ինստիտուտի աշխատակիցների օգնությամբ:

Ինստիտուտում գործում է սպորտային դահլիճը իր ցնցուղակարաններով, հանդերձարաններով և սպորտային գույքով:

Մեր ինստիտուտի գոյության առաջին իսկ օրերի առաջատար խնդիրներից մեկն է եղել գրադարանի աշխատանքի կազմակերպումը: Գրքերի քանակը այսօր կազմում է 18350 միավոր, որոնցից մեծ մասը կազմել է ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմը: Ինստիտուտում գործում է համակարգչային դասարան և ընթերցասրահ:

2015թ-ին լրացավ ՀԲԻ-ի գործունեության 25 տարին: Այս տարիների ընթացքում բուհը կրթել և դաստիարակել է բժիշկների մի քանի սերունդ, ովքեր քննություն են բռնել մեր երկրում և նրա սահմաններից դուրս: Բուհի շրջանավարտներից շատերը պաշտպանել են թեկնածուական թեզեր: Նրանցից ոմանք դասավանդում են հարազատ բուհում: ՀԲԻ-ում գործում է ուսանողական խորհուրդ, որը ներկայացնում է ուսանողների խնդիրները:

ՀԲԻ-ն հրատարակում է «Էրեբունի» ամսաթերթը, որի նպատակն է լուսաբանել ինստիտուտի կյանքը և իրադարձությունները:

ՀԲԻ-ին հանդիսանում է «Բամբեր ստոմատալագիայի և դիմաճնտային բժշկության» գիտագործնական հանդեսի տեղեկատվական աջակիցը, որը լույս է տեսնում ՀԲԻ-ի գիտական խորհրդի երաշխավորությամբ: Հանդեսը ընդգրկված է ԿՆ ԲՈԿ-ի կողմից ընդունելի գիտական ամսագրերի ցանկում: Հանդեսի գլխավոր խմբագիրը ՀԲԻ-ի ստոմատոլոգիայի ամբիոնի վարիչ՝ Լ.Ն. Անդրիասյանն է: Հանդեսում կարող են տպագրվել նաև ՀԲԻ դասախոսների և ուսանողների համատեղ գիտական աշխատանքների արդյունքները:

ՀԲԻ-ը ձգտում է արմատավորել առաջադեմ կրթական ծրագրեր եւ մեթոդներ, ձեւավորել առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ:

Այդ երկուսուկես տասնյակ տարիների ընթացքում ձեւավորվեց ՀԲԻ վարկանիշը ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Ներածություն

Բժշկական բուհի ուսանողի ուսումը սկսվում է կարևոր գործոնից՝ կարգապահությունից /բժշկի համազգեստի-խալաթի պարտադիր կրելը ինստիտուտի տարածքում, դասերին ժամանակին ներկայանալը, անհարգելի չբացակայելը/: Ստանձնելով բժշկի մարդասիրական, պատասխանատու և առաքինի մասնագիտությունը ուսանողը պետք է ամեն ջանք գործադրի օգտագործելով իր գիտական պոտենցիալը և բուհի դասախոսական կազմի կողմից տրվող գիտելիքները՝ դառնալու մեր հասարակության համար օգտակար, պիտանի և գրագետ բժիշկ:

Դասընթացներ

Հայկական բժշկական ինստիտուտում /ՀԲԻ/ գործում է երկու ֆակուլտետ՝ բուժական /ուսման տևողությունը 6 տարի/ և ստոմատոլոգիական /ուսման տևողությունը 5 տարի/: Բուժական կամ ստոմատոլոգիական ֆակուլտետը ավարտելուց հետո շրջանավարտը, ընտրելով բժշկության որևէ նեղ մասնագիտություն, ընդունվում է կլինիկական օրդինատուրա, որից հետո կարող է աշխատել որպես բուժող բժիշկ և համապատասխանաբար բժիշկ-ստոմատոլոգ: Մագիստրատուրան ավարտած շրջանավարտը հնարավորություն ունի նաև իրեն շնորհած դիպլոմով աշխատել բժշկական ուսումնարաններում կամ բուհերում, դասավանդելով բժշկական առարկա:

1-3 կուրսերում դասավանդվող առարկաները ժամային են /1 օրվա ծանրաբեռնվածությունը 6 ժամ է, մի ժամը 80 րոպե/:

Դասընթացների ժամանակացույց.

1 ժամ 9³⁰-10⁵⁰

2 ժամ 11³⁰-12²⁰

3 ժամ -12⁴⁰ - 14⁰⁰

Բուժական ֆակուլտետի 4-6 և ստոմատոլոգիական ֆակուլտետի 4-5 կուրսերում դասընթացները ընթանում են կլինիկական բազաներում ցիկլային պարապմունքների ձևով /ծանրաբեռնվածությունը շաբաթներով- 1շաբաթը կազմում է 30 ժամ/:

Դասի կառուցվածքը՝ ծանոթություն առարկայի հակիրճ բովանդակությանը, թեմայի ներկայացում, տնային առաջադրանք, անհասկանալի հարցերի պարզաբանում, ուսանողի գիտելիքների ստուգում:

Բժշկական քոլեջներից ընդունվող ուսանողների համար կազմակերպվում են լրացուցիչ դասընթացներ՝ որոշ առարկաներից ՀԲԻ-ի կրեդիտային համակարգին համապատասխանեցնելու համար:

Գիտելիքի ամփոփում

Յուրաքանչյուր ուստարի կազմված է 2 կիսամյակից՝ աշնանային և գարնանային: Կիսամյակային նյութը ավարտելուց հետո ուսանողը ստանում է կատարողական ըստ գիտելիքների ցուցաբերման և դասընթացի հաճախումների: Մինչև 30% բացակայությունների դեպքում ուսանողին հնարավորություն է տրվում հանձնել բացակայած թեմաները դասերի ընթացքում, ելնելով տվյալ առարկան դասավանդողի պահանջներից /թեմայի լրացում հավելյալ դասընթացների ժամանակ, ռեֆերատի ներկայացում և այլն/, 30%-ից ավել

բացակայությունների դեպքում ուսանողը չի ստանում կատարողական ու չի թույլատրվում ստուգարքի կամ քննության: Չբացակայած և սեմինարները դրական հանձնած ուսանողները կատարողականը ստանում են մեխանիկորեն ` առանց հարցման: Կատարողականների ժամանակահատվածը աշնանային կիսամյակում դեկտեմբերի վերջին շաբաթն է, իսկ գարնանայինում մայիսի վերջին շաբաթը: Ստուգարքները ուսանողը հանձնում է կատարողականը հանձնելուց հետո տվյալ շաբաթում, իսկ կիսամյակային քննությունները տեղի են ունենում հունվարին և հունիսին աշնանային և գարնանային կիսամյակներին համապատասխան:

Գիտելիքի գնահատում

Դասընթացների գնահատման մեթոդներից են.

Ա. տեսական դասընթացների դեպքում` ընթացիկ հարցումներ, սեմինարներ, ստուգողական, թեստային աշխատանքներ, ռեֆերատների ներկայացում, խնդիրների լուծում, բաց դասեր, ընթացիկ /կիսամյակային/, միջանկյալ /առարկան ավարտելիս/ և ամփոփիչ ատեստավորում ԲՈՒՀ-ն ավարտելիս,

Բ. գործնական դասընթացների դեպքում` ձևաք բերված հմտությունների և կարողությունների իրականացում կապված հիվանդի վարման հետ:

Առաջադիմության գնահատումը կատարվում է`

1. ընթացիկ գնահատականներով, սեմինարների և ստուգողականների հանձնումով,
2. միջանկյալ ատեստավորմամբ` առարկան ավարտելիս, /ստուգարք կամ քննություն/:
3. ամփոփիչ ատեստավորում` ավարտական պետական քննություններ:

Ամփոփիչ ատեստավորումը կատարվում է ըստ յուրաքանչյուր դիսցիպլինայի`

- 1.թեստավորում.
- 2.շրջանավարտի աշխատանքը ստանդարտիզացված պացիենտի հետ.
- 3.հարցազրույց տոմսերով և սիտուացիոն խնդիրներով:

Առաջին էտապը հաջողությամբ հանձնած ուսանողները թույլատրվում են երկրորդ էտապի` հիվանդի կուրացիա/20-40րոպե/ և երրորդ էտապում`թեորետիկ հատվածում անց է կացվում բանավոր քննություն տոմսերով, որտեղ ներառվում են հարցեր ըստ հիմնական դասավանդված առարկաների, հաշվի առնելով տվյալ առարկայի տոկոսային հարաբերությունը հարակից առարկաների հանդեպ:

Ինքնուրույն աշխատանքի գնահատումը կատարվում է գիտական գրականությունը ամփոփելով /ռեֆերատներ, սիտուացիոն խնդիրների լուծում/, թեստային ստուգումով, տնային առաջադրանքի կատարմամբ /վարժություններ, խնդիրներ/, համացանցում վստահելի կայքերից տեղեկատվություն հայթայթելու և օգտագործելու ունակությամբ, բանավոր զեկույցներով, ստուգարքով կամ քննությամբ:

Բարձր կուրսերի ուսանողների մոտ մշակվում են կլինիկական կոմպետենցիաներ, կապված հիվանդի վարման հետ: Կլինիկական կոմպետենցիաների գնահատման համար ուսանողը պետք է.

1.Ունենա հիմնարար գիտելիքներ կենսաբժշկական, կլինիկական առարկաներից և կարողանա կիրառել դրանք:

2.Ունակ լինի ճշգրիտ և պարզ կերպով ներկայացնել կլինիկական առարկաներին վերաբերող դրույթները, դրանց հիմնավորումները, հիմնախնդիրները, լուծումները, ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր խոսքում:

3.Ցուցաբերի բժշկին բնորոշ մտածելակերպ , օգտագործելով տեսական և կիրառական ասպեկտների միջև կապերի իմացություն և կարողանա դրանք մեկնաբանել և հիմնավորել:

4.Ունակ լինի ամբողջովին հավաքելու հիվանդից վերհուշություն, որը նրան կօգնի ճիշտ ախտորոշում ձևակերպելու:

5.Տիրապետի բժշկության մեջ օգտագործվող տարբեր կլին.լաբորատոր և ֆունկցիոնալ ախտորոշման մեթոդներին:

Գնահատումը կատարվում է գումարային գնահատականի միջոցով:

Գումարային գնահատական` առակայի ավարտին, տարվա վերջում կամ ամփոփիչ ատեստավորման: Ուսանողները պետք է հանձնեն քննությունը, որպեսզի շարժվեն առաջ:

ՀԲԻ –ի գործող գնահատման քննական բալային համակարգը ներկայացված է 10 միավորով /0-4անբավարար, 5-6բավարար, 7-8լավ, 9-10գերազանց/:Գնահատման ընթացքում կիրառվում է վարկանիշային գնահատում /10 միավոր/, ելնելով յուրաքանչյուր առարկայի գնահատման համար ընտրված բաղադրիչներից, որոնցից են քննության, ընթացիկ հարցումների, հաճախելիության, ինքնուրույն աշխատանքի գնահատման միավորները ` օրինակ - / առավելագույնը 5 միավոր գնահատվում է քննությունը ` 5-գերազանց/9-10/, 4-լավ/7-8/, 3-բավարար/5-6/, 2-անբավարար/0-4/, առավելագույնը 1 միավոր հաճախելիությունը, 2 միավոր ընթացիկ հարցումները /սեմինար, ստուգողական աշխատանք, թեստային ստուգում/ և 2 միավոր ինքնուրույն աշխատանքը /ռեֆերատ, սիտուացիոն խնդիր լուծում, թեստային ստուգում / - ընդամենը 5+1+2+2=10առավելագույն միավոր:

Կրեդիտային համակարգ

Ակադեմիական կրեդիտը` դա ուսանողի ուսումնական բեռնվածության չափման պայմանական միավորն է, որն անհրաժեշտ է ուսումնական առարկայի կամ մոդուլի արդյունքներին հասնելու: Ուսման պրոցեսի ընթացքում հստակ որոշվում է կրեդիտների այն մինիմալ քանակը, որն անհրաժեշտ է այս կամ այն որակավորման աստիճան ձեռք բերելու /բակալավր, մագիստրոս, դիպլոմավորված մասնագետ/, ուսումնական դիսցիպլինաների և մոդուլների բովանդակության, պարտադիր/յուրացվում են սահմանված կիսամյակներում/ և էլեկտիվ/ընտրում է ուսանողը/ կուրսերի թվարկման, յուրաքայջուր դիսցիպլինայի կրեդիտային արժեքի համար: ՀԲԻ-ի մեկ ուստարվա ծանրաբեռնվածությունը կազմում է 60 ակադեմիական կրեդիտ կամ 1800 ժամ /1կրեդիտը=30ժամ/:

Ակադեմիական տեղեկագիրը օգտագործվում է ուսանողի ուսումնական գործունեությունը և առաջադիմությունն ուսման որոշակի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ` ուսումնասիրած դասընթացների շնորհված կրեդիտների և ստացած գնահատականների գրանցման միջոցով: Այն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

Միջին որակական գնահատականը /ՄՈԳ/ գնահատականների կրեդիտներով կշռված միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների վրա բաժանելով: Տարբերում են կիսամյակային/հաշվարկված առանձին կիսամյակի համար/ և ամփոփիչ/հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար/ վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

ՄՈԳ= ՎՄ/ԳԿ

ՎՄ – վարկանիշային միավոր **ՎՄ= ՏԿ*Գարդ** որտեղ **Կ** – կրեդիտ, **Գարդ** – արդյունարար գնահատական

ԳԿ= ՏԿ **ՏԿ** – վաստակած կրեդիտների գումար

Կրեդիտային համակարգի տարրերից են ուսումնական ծրագիրը/պլանը/ և ավարտական պահանջները: Ուսումնական ծրագիրը/պլանը/ ներկայացվում է պարտադիր և ընտրովի դասընթացների ցանկով: Յուրաքանչյուր դասընթացի համար պլանում նշվում է առարկայի տևողությունը ըստ կիսամյակների, դասընթացի վարման ձևը/դասախոսություն, գործնական/, կրեդիտների քանակը, ժամաքանակը, շաբաթվա ծանրաբեռնվածությունը և ելքային արդյունքը/ստուգարք, տարբերակիչ ստուգարք, քննություն/:

Կիսամյակի սկզբից մեկ շաբաթ առաջ հրապարակվում է դասընթացների և քննությունների ժամանակացույցը, որը տեղեկատվություն է տալիս դասընթացների կայացման վայրի, դասախոսի, քննությունների օրերի վերաբերյալ:

Եթե ուսանողը չի հավաքում տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների կրեդիտները, ապա նա որպես փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանող հնարավորություն ունի ուղղել թերացումները և բարձրացնել ուսման առաջադիմությունը մեկ ամիս տևողությամբ փորձաշրջանի ընթացքում: Եթե այդ ընթացքում ուսանողը չի դուրս գալիս փորձաշրջանից, ապա նա դառնում է հեռացման ենթակա: Պայմանագրի համաձայն հեռացման ենթակա են երեք առարկայական պարտք ունեցողները/մեկ ստուգարք և երկու քննություն կամ երեք քննություն/: Եթե ուսանողի հավաքած կրեդիտները գերազանցում է 12-ը` նա հեռացվում է ինստիտուտից: ՀԲԻ-ից այլ բուհ կամ այլ բուհից ՀԲԻ տեղափոխվելու դեպքում գումարային կրեդիտների քանակը չպետք է գերազանցի 20 կրեդիտ:

Դրական գնահատված դասընթացի քննության վերահանձնում չի թույլատրվում: Անբավարար գնահատված դասընթացի վերահանձնումը կատարվում է 2 փուլով ըստ ժամանակացույցի /վերաքննության առաջին և երկրորդ ժամանակահատվածների միջև հնարավորություն է տրվում բարձրացնել ուսանողի առաջադիմությունը` կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ/:

Ուսխորհուրդ

Ուսխորհուրդը /ուսանողական խորհուրդ/ սովորողների ներկայացուցչական, ինքնակառավարման, նրանց շահերը ներկայացնող բարձրագույն ընտրովի մարմին է: Ուսխորհուրդը նպատակ ունի պաշտպանել ուսանողների շահերը, բարձրացնել հասարակական կյանքում նրանց սոցիալական դերը, ակտիվությունը, նպաստել հոգևոր և ստեղծագործական զարգացմանը, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, օժանդակել ուսանողների նախաձեռնություններին: Ուսխորհուրդը հաստատուն կապեր, գործնական փոխհարաբերություններ է ստեղծում ՀՀ և արտերկրի բժշկական, գիտական, ուսանողական, երիտասարդական, կրթական, մշակութային կազմակերպությունների հետ/ ուսխորհուրդի կառուցվածքը և գործունեությունը տես կանոնադրության մեջ/:

Ուսանողի իրավունքների պաշտպանություն

1. համաձայն պայմանագրի, կողմերի իրավունքները և պարտականությունները /տես 2.3 և 2.4/ կետերը:
2. հարցերի և խնդիրների դեպքում ուսանողները առաջին հերթին դիմում են կուրատորին:
3. Ուսանողների բողոքները ուսումնական և քննական պրոցեսների վերաբերյալ համապատասխան լուծում են ստանում դեկանատների կողմից:
4. Ուսանողների բողոքները դիտարկվում են ըստ հետևյալ կարգերի`

- կարգ ուսանողների բողոքների դիտարկման

-կարգ հբի-ի ամփոփիչ ատեստավորման արդյունքի բողոքարկման

Տես ինստիտուտի կայքէջում

Ուստարվա «Լավագույն խումբ» և «լավագույն ուսանող»

Ուստարվա «Լավագույն խումբ» կոչմանը հավակնում է այն խումբը, որը ցուցաբերում է բարձր ակադեմիական առաջադիմություն, ակտիվություն ուսանողական կյանքում, լավ հաճախելիություն, ուսումնական կարգապահություն /տես կարգ ՀԲԻ-ի «Լավագույն խումբ» մրցույթի իրականացման /:

«Լավագույն ուսանող» կոչմանը արժանանում է գերազանց ակադեմիական առաջադիմություն, ակտիվություն ուսանողական կյանքում, լավ հաճախելիություն ցուցաբերող ուսանողը, որը նաև օգտվում է լրացուցիչ գիտական գրականությունից, հանդես է գալիս ռեֆերատներով բաց դասերին, թեզիսներով գիտաժողովներին, տպագրելով հոդվածներ գիտաբժշկական հանդեսներում:

Ուսանողական նպաստներ

ՀԲԻ-ի կողմից ուսանողական նպաստի ձևով, ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է միասնական քննությունների վերջնական արդյունքներով 2 առարկաներից 32 և ավել միավոր ստացած դիմորդներին, եթե վերջիններս ուսման բարձր առաջադիմությունը պահպանում են մինչև ուսման ավարտը, ամբողջ ուսման տարիների ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում զոհված ազատամարտիկների երեխաներին: ՀԲԻ-ն վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն 10%-ին ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջե առնվազն 7%ի չափով, իր միջոցների հաշվին` հիմք ընդունելով բաժր առաջադիմությունը և սոցիալական խումբը իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում սոցիալապես անապահով ուսանողներին, երեք և ավելի անչափահաս, կամ 3 և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին` առնվազն 30%, 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին մինչև 23 տարին լրանալը, 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ և մինչև մեկ տարեկան երեխա ունեցողներին, 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ, ինչպես նաև հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցողներին,` առնվազն 50%, սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերի ուսանողներին` առնվազն 20%, նույն ընտանիքից 2 երեխա-ուսանողների համար 15% յուրաքանչյուրին, նույն տոկոսով նաև ՀԲԻ-ի շրջանավարտների երեխաներին, բուհի կազմում հիմնական կամ ժամավճարային պայմանագրով աշխատողների երեխաներին` 50%: Առաջին կուրսի ուսանողները ուսման

վճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության երկրորդ կիսամյակից սկսած: Ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցումից ուսանողը կարող է օգտվել սահմանված միջին որակական գնահատականի շեմը հաղթահարելու դեպքում: Հարգելի պատճառով ուսումնառությունն ընդհատած ուսանողը ուսանողական իրավունքները վերականգնելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը:

Կուրատորներ

ՀԲԻ-ում գործում է կուրատորների գործող համակարգ, որը ծանոթացնում է բուհ ընդունված ուսանողներին ուսման պրոցեսի սկզբունքներին, կազմակերպում է համատեղ այցելություններ մշակութային կենտրոններ, կապ ուսանողների ծնողների հետ, նպաստում ուսման պրոցեսում առաջացած կանֆլիկտային իրավիճակների լուծմանը:

Ուսանողի PORTFOLIO

PORTFOLIO – անգլ. կարևոր փաստաթղթերի թղթապանակ

Ընդհանուր տեղեկություններ

1. Աշխատանքների PORTFOLIO
ա/ ուսումնական գործունեություն /ռեֆերատներ, հիվանդության պատմություններ/
բ/ հոդվածներ, զեկույցներ, թեզիսներ
գ/ մասնակցություն ինստիտուտի հասարակական կյանքին /պատվոգրեր, շնորհակալագրեր
դ/ ուսումնաարտադրական պրակտիկա /օրագիր, ատեստավորման գրքույկ/
2. Նվաճումների PORTFOLIO
ա/ պարգևներ և նվաճումներ
բ/ սպորտային նվաճումներ
գ/ լրացուցիչ նվաճումներ /ծրագրային իմացություն, օտար լեզուների տիրապետում, վարորդական իրավունք/